ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ավազան գյուղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ Ֆիզկուլտուրա /9 դասաժամ/, Կենսաբանություն /6 դասաժամ/, ՆԶՊ /2 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից աստատված հարցաշարերի:

Հարցազրույցի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առաձին:

Մրցույթին կարող է մասնակցել ուսուցչի պաշտոնին ներկայացվող՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

- դիմում (Ձև 1),
- 1 լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությանը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են մինչև դեկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 3-ին `ժամը 12:00-ին, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ավազան գյուղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ավազան 1-ին փողոց շենք 5:

Տեղեկությունների համար զանգահարել (094) 51-68-16 հեռախոսահամարով:

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Ավազան գյուղի
հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրինություն